Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ

(30 մարտի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Ես հաղթեցի աշխարհին:
(Յովհ. ԺԶ. 33)

Խոսքեր՝ քաղված Ավետարանից, արտաբերված Քրիստոսի շուրթերից: Խոսքեր, որոնք հարյուրամյակների մշուշի միջից լույսի նման ճեղքում են իավարը ջերմացնում բոլոր այն սրտերը, որոնք ապավինում են Քրիստոսին. «Ես հաղթեցի աշխարհին»:

Իրապես, սիրելի քույրեր եւ եղբայրներ, այսօր հաղթանակի տոն է, տոնն է Քրիստոսի Հարության. տոն, որը մահվան, չարի ու իավարի դեմ կյանքի, **բա**րու ու լույսի հաղթանակն է: Համայն քրիստոնյա մարդկությունը հարյուրամյակներ շարունակ, իր հոգին է ընծայել Քրիստոսին, Հարության տոնի օրը հոգեւոր բերկրանք ապրելով, մասնակցել մատուցվող Պատարագին: Ամբողջ քրիստոնյա աշխարհը զատկական օրերին խանդավառված է ու գոտեպնդված:

Վաղը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի պիտի ունենա հանդիսավոր Սուրբ Պատարագ: Պատարագին կմասնակցեն բազում հայորդիներ՝ բարձրաստիճան պաշտոնյաներից մինչեւ պարզ աշխատավոր մարդիկ, որոնց միավորում ու համախմբում է ընդհանուր զգացումը՝ հանդեպ Քրիստոս սիրո, նվիրումի, ակնածանքի, պաշտամունքի եւ խոնարհումի զգացումը: Եւ այդ զգացումը մարդկանց ներշնչում է հաղթանակի ոգի:

Հաճախ, հատկապես սովետական հասարակարգի տարիներին, մարդկանց մտքերի մեջ փորձում էին միտքեր այն գաղափարը, որ քրիստոնեությունը թույլերի, տկարների ու նվաստացվածների կրոնն է: Դժբախտաբար, այսօր եւս նման մտայնություններ կան: Հաճախ կարելի է լսել այսպես կոչված հայրենասերներից, որ եթե մենք քրիստոնյա չլինեինք, եթե մենք չլինեինք Քրիստոսի հետեւորդ, ստիպված չլինեինք, երբ մեզ մի ապտակ են հասցնում, երկրորդ երեսը շրջել, մենք, բնականաբար, շատ ավելի հզոր պետություն կլինեինք, շատ ավելի ուժեղ կլինեինք: Բայց նրանք մոռանում են մի պարզ ճշմարտություն, որ Քրիստոս շատ ավելի ուժեղ էր, քան բոլոր այն առաջնորդները, որոնք երբեւիցե հավակնել են մարդկանց իրենց հետեւորդ դարձնել, որովհետեւ ուժեղ լինելու համար պարտադիր չէ ամեն հասցված ապտակին հակահարված տալ: Վկան է մարդկության 2000-ամյա պատմությունը: Անձն ավելի ուժեղ է, երբ իր մեջ

ուժ, համբերություն եւ դիմադրություն ունի ապրակներն անպատասխան թողնելու, որովհետեւ վստահ է, որ այդ հաղթանակը վերջիվերջո իրենն է լինելու:

Անտարակույս է, որ Քրիստոսին ոչինչ չէր արժենալու, եթե հրեշտակների գնդերին պատգամեր եւ Աստծուն խնդրեր, որպեսզի չարչարանքները, տառապանքները, մարդկանց կողմից Իրեն հասցված վիրավորանքները Իրենից հեռու վանվեր: Հրեշտակների գնդերն ընդամենը մեկ վայրկյանում, աներեւույթ ուժերն ընդամենը հաշվված րոպեներում պիտի անէացնեին եւ կանէացնեին այն բոլոր չար ուժերին, ովքեր որ համարձակվել էին Աստծու Որդուն չարչարանքի, տառապանքի, մատնության, խաչելության եւ, վերջապես, մահվան մատնելու: Բայց խաչը, տառապանքը, չարչարանքը դարձան այն միջոցը, որով արժեք եւ բովանդակություն ստացավ Քրիստոսի Հարությունը եւ հասցված ապրակները, որ անպատասխան էին մնացել, իրապես, իրենց պատասխանը գտան հարության գործողության եւ առաքելության մեջ: Ահա այս պատճառով է, որ Հարությունը դարձավ խորհրդանիշը հաղթանակի:

Քրիստոսի Հարությունը, սակայն, մի պարզ հաղթանակ չէ: Այն բարության մեջ հարատեւող եւ չարիքը չեզոքացնող հաղթանակ է: Հաճախ մարդիկ հաղթանակը դարձնում են ինքնանպատակ: Ժամանակակից մտածողության մեջ՝ թե՛ քաղաքականության մեջ, թե՛ տնտեսության մեջ մարդիկ, գործիչներ մտածում են, որ ամեն ինչ կարելի է ի սեր հաղթանակի: Սա եւս մի սխալ, այլասերված մտածողություն է: Հաջողությունը ֆետիշացվում է, հաղթանակը՝ դարձվում է գեր նպատակ: Տեսե՛ք, բազմաթիվ գործարարներ երբեմն պատահում է, որ հաջողության հասնելու, նյութական շահ ապահովելու համար դիմում են բազմապիսի միջոցների՝ հակառակ, որ գոյություն ունեն մրցակցության քաղաքակիրթ եւ ընդունված պայմաններ: Բայց քանի որ կարեւորագույն արժեքը թյուրըմբռնված հաղթանակն է համարվում, այդ իսկ պատճառով ամենայն ինչ արդոնելի է թվում:

Մինչդեռ սրանք հաղթանակներ են, երբ հաղթողն ակամա հայտնաբերում է, որ իր կորուստները շատ ավելին են, քան իր նվաճումները: Համաշխարհային պատմագիտության մեջ կա մի արտահայտություն, որ կոչվում է «Պյուրոսյան հաղթանակ»: Սա մի թագավորի մասին է, որն իր թշնամիների դեմ, հակառակորդների դեմ հաղթանակ ունեցավ, բայց վերջում պարզվեց, որ իր զորքերի մեջ, իր զինվորների մեջ կորուստները շատ ավելին են: Ահա այսպիսին են այն բոլոր հաղթանակները, որոնք որ կայանում են ի սեր ուրիշներին պատճառված տառապանքի, որոնք որ կայանում են ի սեր քո ընտանիքի, քո հարազատների, քո մերձավորներին պատճառված վնասների եւ կորուստների: Հիշենք ինչ է ասում Աստված. «Ինչ օգուտ է մարդուն, եթե նա ամբողջ աշխարհը շահի, բայց իր հոգին կորցնի»: Իսկ մարդը, որը որ իր միակ գեր նպատակը դարձրել է այսպիսի հաղթանակը, իրապես, ոչ միայն կորցնում է իր մերձավորներին, իր գինակիցներին, իր ընտանիքին, այլեւ կորցնում է ամենաթանկը, որ պարգեւել է Աստված իրեն՝ իր հոգին: Իսկ հոգին կորցնելուց հետո ոչ մի հաջողություն եւ ոչ մի հաղթանակ չի կարող բովանդակություն ստանալ եւ արժեք լինել: Ահա Քրիստոս հարություն առավ, որպեսզի իրական այդ հաղթանակի զգացողությունը փոխանցի մեզ. հաղթանակ, որը

պայմանավորված է չարի դեմ դիմադրությամբ՝ հարատեւելով բարու մեջ, ապակների դեմ չընդվզելով, փառապանքից չխուսափելով, բայց հարատեւ, հեւեւողականորեն, քայլ առ քայլ դեպի բարու հաղթանակն ընթանալով:

Ահա այսօր, սիրելի քույրեր եւ եղբայրներ, բարու այս հաղթանակն ենք մենք տոնում: Տոնում ենք բարու այս հաղթանակը եւ ինչո՞ւ խանդավառությամբ, ոգեւորությամբ չնշենք այն, ինչո՞ւ մեր հոգիները չցնծան այդ հաղթանակով եւ ուրախությամբ, հակառակ որ կյանքում, մեր շրջապատում կան շատ իրողություններ, որոնք վշտացնում են մեր հոգին, որոնք մեզ նեղսրտություններ են պատճառում: Քրիստոսի հաղթանակը բերում է այն հույսը, այն վստահությունը, որ մի օր այդ դառնությունները, անարդարությունները պիտի վերանան մեր կյանքից: Մեզ տրված չէ իմանալ, թե մեր աղոթքներն Աստծու կողմից երբ են արձագանք ստանալու: Մեզանից յուրաքանչյուրը մեկական պատասխանն է իր ծնողների, **իր նախ**նիների կողմից Աստծուն ուղղված աղոթքի: Եւ գուցե այսօր մեր աղոթքի պատասխանը մեր ընկալումներով ուշանան, բայց դրանց պատասխանները, դրանց արձագանքներն անպայմանորեն լինելու են, անպայմանորեն Աստված պատասխանելու է մեր աղոթքին, մեկին՝ որպես առողջություն իր զավակների, մյուսին՝ իբրեւ բարեբախտություն իր ընտանիքի եւ իր հարազատների:

Թող Աստված այս վստահությունը պարգեւի ամենքիս, եւ Քրիստոսի լույս Հարության շնորհներն ու օրհնություններն ամենքիս հոգիների մեջ զորություն դարձնի դիմակայելու համար բոլոր տեսակի դժվարություններն ու մարտահրավերները:

Տիրոջ օրհնությունը, սերը եւ շնորհը ամենքիս հետ այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց